

ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմինի Ցայտարարություն

Խնամքի դատապարտում ենք Քննչական կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 236-րդ յօդուածի 2-րդ մասի յատկանիշներով օգոստոսի 25-ին նախաձեռնուած քրեական վարոյթի շրջանակներում Դաշնակցութեան անդամների եւ համակիրների ընակարաններում խուզարկութիւնների, ձերբակալութիւնների եւ հարցաքննութիւնների վերաբերեալ տարածած հաղորդագրութեան մէջ տեղ գտած առերեւոյթ կեղծ տեղեկութիւնների եւ օրէնքի խախտումների վերաբերեալ, որոնք եւս մէկ անգամ ապացուցում են, որ այս շինծու գործի նպատակն է շեղել հանրութեան ուշադրութիւնը օրուայ քաղաքական իշխանութիւնների հայրենադաւ ծրագրերից, կասեցնել դրանց դէմ պայքարող անձանց եւ ուժերին:



Ունահարելով անմեղութեան կանխավարկածը, փորձելով քողարկել իր ապօրինութիւնները, քննչական կոմիտէն այս հաղորդագրութեամբ փորձում է հանրութեան մօտ ստեղծել տպաւորութիւն՝ թէ իբր իրականացուած խուզարկութիւնների արդիւնքում «պարզուել է», որ հայրենադաւ իշխանութիւնների դէմ պայքարող անձինք հաւաքներին մասնակցել են նիւթական շահագրգռութեամբ: Սա ոչ միայն անարգանք է հայրենիքի համար պայքարողների հասցէին, այլեւ ունի նպատակ՝ վարկաբեկելու այդ պայքարը, «Հայաստան դաշինք», Դաշնակցութիւնը, ստեղծի «հիմքեր» նոր ձերբակալութիւններ եւ ակնյայտ ոչ իրաւահարմար ձերբակալուած անձանց նկատմամբ կալանաւորումներ իրականացնելու համար:

Իրաւապահ մարմինների կողմից իրականութեանը չհամապատասխանող տեղեկատուութեան տարածումը նպատակ է հետապնդում կեղծ հիմքեր ստեղծել այս ապօրինի քրեական գործը շարունակելու, դատական ատեաններում կալանաւորումը որպէս խափանման միջոց ընտրելու միջնորդութիւնները «հիմնաւորելու» նպատակ:

Ակնյայտ քաղաքական հետապնդման այս ամօթալի վարքագծի փոխարէն քննչական կոմիտէն եւ դատախազութիւնը պարտաւոր էին քրեական հետապնդում նախաձեռնել ապօրինի գաղտնալսման համար, այլ ոչ թէ ապօրինութիւնների միջոցով մաս դառնալ հայրենադաւ ծրագրերի իրականացմանը կամ անխնայ օգտագործման գործիք դառնալ այդ ծրագրերը իրականացնողների ձեռքին:

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ
13 յունուար 2022, Երեւան

ՀՅԴ ԳԵՄ-ի կազմակերպած Արցախի զօրակցական հաւաքին ներկայ գտնուեցաւ Պրիթիշ Գոլումպիայի առողջապահութեան նախարար Ատրիան Տիքս



Յունուար 14-ին, Վանդուվրի քաղաքակեդրոնին մէջ կայացաւ Արցախի զօրակցութեան հաւաք, որուն ներկայ գտնուեցաւ եւ Արցախահայրութեան իր զօրակցութիւնը յայտնեց Պրիթիշ Գոլումպիայի առողջապահութեան նախարար Ատրիան Տիքս: Հաւաքը կազմակերպուած էր ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան (ԳԵՄ) «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղին կողմէ: ՀՅԴ ԳԵՄ-ի անդամները բողոքի իրենց ձայնը բարձրացուցին, պահանջելով վերջ տալ Ատրպէյճանի կողմէ Արցախի շրջափակման:

Խօսք առաւ ՀՅԴ ԳԵՄ-ի «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղի անդամ Գառնի Քէռլիբեան, որ դատապարտեց Արցախի շարունակուող շրջափակումն ու Ատրպէյճանի կողմէ կատարուած մարդկային իրաւանց ոտնակոխման արարքները եւ կոչ ուղղեց Գանատայի պետութեան ճանչնալու Արցախի անկախութիւնը, միաժամանակ յիշեցնելով, որ շրջափակումը ինքնին ազդ մը սպանդի ենթարկելու բռնարար է:

Հաւաքի ընթացքին խօսք առնելով նախարար Տիքս յայտնեց, որ Ատրպէյճանի իշխանութիւններուն կողմէ պարտադրուած շրջափակումին պատճառով՝ Արցախի ժողովուրդը կանգնած է սովի մատնուելու վտանգին դէմ յանդիման: Ան հաստատեց իր զօրակցութիւնը Արցախին եւ յայտնեց, թէ Գանատայի կառավարութիւնը պէտք է իր բողոքը յստակօրէն արձանագրէ ի տես ատրպէյճանական բռնադատութիւններուն եւ պաշտպան հանդիսանայ Արցախի ժողովուրդի մարդկային իրաւունքներուն:

Արցախի շրջափակման հարցով Գանատայի խորհրդարանի ընդդիմադիր կուսակցութիւնները արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի արտահերթ նիստ կը պահանջեն

Գանատայի ընդդիմադիր Պլոք Քեպէզուա կուսակցութեան նախաձեռնութեամբ, Գանատայի խորհրդարանի երեք ընդդիմադիր կուսակցութիւնները՝ Պահպանողականները, Նոր Դեմոկրատներն ու Պլոք Քեպէզուան, Գանատայի խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի արտահերթ նիստ կը պահանջեն, որպէսզի խորհրդակցութիւն կայանայ Արցախի շարունակուող շրջափակման առնչութեամբ: Այս մասին կը հաղորդէ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը:

Պլոք Քեպէզուա կուսակցութեան անդամ Սթեֆան Պերժերուն եւ Պահպանողական կուսակցութեան անդամ Կարնէթ Ճիրնըս ընկերային ցանցերու վրայ այս մասին հաղորդեցին, հաստատելով որ ամենայն հաւանականութեամբ Յունուարի վերջին շաբթուան ընթացքին կայանայ մշտական յանձնաժողովի արտահերթ նիստը:

ՀՕՄ-ի Համայն Ընտանիքը Կը Գուժէ Տիպար Խաչուհի Արփի Սապունճեանի Մահը

Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութիւնը եւ ՀՕՄ-ի համայն ընտանիքը սրտի դառն կսկիծով կը գուժեն ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ, իր ուխտին նուիրեալ՝ ընկերուհի Արփի Սապունճեանի մահը, որ պատահեցաւ Յունուար 11, 2023-ին, Մոնթրէլ, Գանատա:

Սուրիոյ համայնքի վաստակաշատ մանկավարժ, ՍՕԽաչի Շրջանային վարչութեան ատենապետուհի եւ տիպար խաչուհի ընկերուհի Արփի Սապունճեանը եղած է ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ 1995-էն մինչեւ 1998 թուականները:

Մեր խորին ցաւակցութիւնը կը յայտնենք ընկերուհիին սգակիր ընտանիքին եւ հարազատներուն, ՀՕՄ-ի եւ ՍՕԽաչի բոլոր անդամներուն:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԵՂԻՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

YES YOU CAN

CONTACT US FOR MORE INFORMATION

Introducing,
The All-New HR-V

KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN

HONDA GABRIEL HONDA

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միֆան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Սփիւռքի տարի (Բ). Ինքնաքննութենէ վերակազմակերպում. Պատգամ Արամ Ա. կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
Թեմակալ Առաջնորդներուն,
հոգեւոր դասուն,
Ազգային իշխանութեանց, եւ
մեր ժողովուրդի զաւակներուն

2023 տարուան սեմին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանդէն քրիստոնէական սիրով ու հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Ազգ. Ընդհանուր ժողովը, Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովները, Միաբանութիւնները, Թեմակալ Առաջնորդներն ու Ազգ. Իշխանութիւնները, մեր կեանքէն ներս գործող քաղաքական, կրթական, մշակութային, բարեսիրական եւ համայնքային միութիւններն ու կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ մեր ժողովուրդի սիրելի զաւակները: Կաղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ բացուող Նոր Տարին մեր անհատական, ընտանեկան եւ ազգային կեանքին մէջ լեցուի առողջութեան, յաջողութեան եւ երջանկութեան երկնային բարիքներով:

Ինչպէս ծանօթ է մեր ժողովուրդի զաւակներուն, անցնող տարին, 2022-ը, Հայրապետական Հռչակագրով յայտարարեցինք «Սփիւռքի Տարի»: Անդրադառնալով Սփիւռքի պարզած ներկայ վիճակին, եւ այն հիմնական դրդապատճառներուն, որոնք Մեզ մղեցին 2022 տարին հռչակելու Սփիւռքի Տարի, Հռչակագրին մէջ հետեւեալ հաստատումը կատարեցինք:

«Հայօրէն մաշունի ենթակայ Սփիւռքը՝ տեղ մը անորոշութեան ալիքներու մէջ կ'օրօրուի, այլ տեղ՝ փոքորիկներու դէմ կը պայքարի. տեղ մը՝ նոր ինքնութեան փնտռումի մէջ է, այլ տեղ՝ տեղայնացումի արագ ընթացքին մէջ է: Հետեւաբար, այս կացութեան դիմաց Սփիւռքի վերակազմակերպումը ու վերակենսաւորումը հրամայական անհրաժեշտութիւն է: Այս բազմատարած ու բազմերես ծրագիրը իր գործնական ընթացքը կրնայ առնել նախ Սփիւռքի ինքնաքննութեամբ, ինքնարժեքութեամբ մտածելու համայնական կենսակերպ մէջ անոր իւրայատուկ տեղին ու դերին յստակեցումով: Այս հսկայածաւալ աշխատանքին հարկ է լծուիլ այսօր. վաղը կրնայ ու՛շ ըլլալ՝ աշխարհի արմատական ու արագ փոփոխութիւններու յորձանուտին մէջ ապրող Սփիւռքի համար»: Ապա, մեկնելով Սփիւռքի պարզած անորոշ ու մտահոգիչ կացութենէն, շեշտեցինք թէ՛ «Անորոշութիւններով ու տագնապներով լեցուն Սփիւռքի ներկայ իրավիճակը, մեր եկեղեցին, մեր դեկալար մարմինները ու մտաւորականները պէտք է մղէ՛ իրապաշտ ոգիով, պատասխանատու մտեցումով ու համապարփակ տեսլականով տագնապելու, մտածելու, ֆնցելու, խորհրդակցելու եւ մանաւանդ՝ Սփիւռքի ներկայ վերակազմակերպելու ու անոր ապագան հուճաւորող ճիշդ նախաձեռնութեան վերջնական միջոցներ որոնելու»:

Արդարեւ, անցնող տարուան ընթացքին Սփիւռքին ներկայ գոյավիճակին ու դիմագրաւած մարտահրաւէրներուն շուրջ՝ յօդուածներու, ուսումնասիրութիւններու, դասախօսութիւններու ու սեմինարներու ճամբով արտայայտուած մտահոգութիւնները, ներկայացուած մատնանշումները ու կատարուած վերլուծումները փաստօրէն վերաշեշտեցին՝ Հայրապետական Հռչակագրով Մեր կատարած ընդգծումները եւ յստակապէս՝ Սփիւռքը իր ներկայ վիճակէն դուրս բերելու եւ վերակազմակերպման առաջնորդելու անյետաձգելի հրամայականը:

Հետեւաբար, մէկ կողմէն նկատի ունենալով սկսուած քննարկումներու շարունակման կարեւորութիւնը, եւ միւս կողմէն, քննարկումներէ անդին՝ գործադրութեան հեռանկարներուն եւ միջոցներուն յստակեցման անհրաժեշտութիւնը, յատկապէս թեմերու շրջագծէն ներս, ներկայ Հայրապետական Գիրով 2023 տարին դարձեալ կը հռչակենք

ՄՓԻԻՔԻ ՏԱՐԻ (Բ.)

(Ինքնաքննութենէ՝ վերակազմակերպում) շեշտաւորումով: Մեր սպասումն է, որ առանց անտեսելու ինքնաքննութեան յոյժ կարեւորութիւնը, ներկայ տարուան ընթացքին գործնական քայլեր առնուին եւ ծրագրերն իրականացնուին՝ մասնաւորաբար թեմական շրջագծէն ներս:



Ի՞նչ ԿԱՏԱՐՈՒԹՅԱՒ ՄՓԻԻՔԻ ՏԱՐՈՒԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Խոր գոհունակութեամբ կ'ուզենք հաստատել, թէ՛ Սփիւռքի Տարուան հռչակումը լայն արձագանք գտաւ ակադեմական, մտաւորական, մամուլի եւ երիտասարդական շրջանակներէն ներս: անցնող տարուան ընթացքին յաջողաբար հինգ առիթներով առցանց հանդիպումներ տեղի ունեցան Սփիւռքի հարցերուն ծանօթ մասնագէտներու, մտաւորականներու, տեղեկատուական մարզի մասնագէտներու եւ երիտասարդներու հետ: Այս հանդիպումներու ընթացքին արժարձուեցան ու քննարկուեցան շարք մը այժմէական խնդիրներ, եւ կատարուեցան առաջարկներ: Կաթողիկոսարանի նախաձեռնութեամբ կայացած յիշեալ հանդիպումներու ընթացքին եղած քննարկումներուն ներկայացուցած կարեւորութիւնը նկատի առնելով, շահեկան կը նկատենք ընդհանուր գծերով անդրադառնալ անոնցմէ իւրաքանչիւրին:

Ա) Առաջին հանդիպումին, բացման Մեր խօսքին մէջ, պարզելէ ետք Սփիւռքի Տարի հռչակելու շարժումները, ընդհանուր գծերով անդրադարձանք նոր ձեւաւորուող եւ յարափոփոխ սփիւռքեան միջավայրերու իրավիճակներուն իւրայատուկութիւններուն եւ տարբեր բնագաւառներու մէջ գործող աւանդական կառույցներու դիմագրաւած դժուարութիւններուն: Յատկապէս շեշտեցինք ինքնութեան վերաբերող հիմնահարցերը: Ապա մասնակիցները ներկայացուցին հետեւեալ խնդիրները:

- Համեմատական սփիւռքագիտութեան օգտագործումը:
- Ինքնութեան խնդիրներու քննարկման տարբեր միջոցներու որդեգրումը:
- Մեր կառույցներէն հեռու սփիւռքեան գոյավիճակներու հասանելիութեան միջոցներու որոնումը:
- Սփիւռքեան հարցերու ոլորտային մասնագիտական քննարկումներու ձեւաչափերուն ճշգրտումը:
- Ըստ միջավայրի եւ իւրայատուկութիւններուն նկատառումներով ներգրաւման տարբեր ռազմավարութիւններու մշակումը:
- Ցանցային դրուածքի լիարժէք օգտագործման կարելիութիւններու ուսումնասիրութիւնը:
- Համացանցային տարածքներու վրայ համախմբումներու յառաջացումը:
- Սփիւռքի մարդուփի եւ կարողականութեան ցանկազրուումի եւ հաւաքագրումի աշխատանքին կարեւորութիւնը:
- Երիտասարդութեան ուղղութեամբ թիրախային ծրագրերն իրականացնելու հրամայականը:
- Հայաստան, Արցախ եւ Սփիւռք կապերու ամրապնդման նոր հայեցակարգերու պատրաստութիւնը:
- Վերոյիշեալ խնդիրներուն իրապաշտ, համապարփակ ու խորքային քննարկումը նկատուեցաւ որպէս անհրաժեշտ մէկնակէտ՝ Սփիւռքի վերակազմակերպման գործընթացին:
- Բ) Խորհրդակցութիւններու երկրորդ հանդիպումի բացման Մեր խօսքով ընդգծեցինք հետեւեալ կէտերը:— Արդեօք Սփիւռքը պատրաստ է վերակազմակերպուելու:— Իրապաշտ արժեւորումի անհրաժեշտութիւնը, իրրեւ մեկնակէտ հարցերու դիմագրաւման եւ լուծման եղանակներու ճշգրտումը:— Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներու ծրագրաւորումի գործընթացի մշակումը: Այս ծիրէն

ներս յոյժ կարեւոր նկատուեցաւ եկեղեցւոյ եւ իր շուրջ գործող մարմիններուն, միութիւններուն եւ աւանդական կառույցներուն դերը:

— Նոր օրակարգերու ճշգրտման հրատապութիւնը, ի հարկին, կառույց, համակարգ, մեթոտաբանութիւն եւ կանոնադրութիւններ բարեփոխելու սկզբունքը:

Ապա, քննարկումը կեդրոնացաւ երեք հիմնահարցերու վրայ, որպէս ուղենիշ հետագայ աշխատանքներուն:— հաւաքական արժէքներ, ինքնութիւն եւ մասնակցութիւն:

Գ) Խորհրդակցութիւններու երրորդ հանդիպումին իրենց մասնակցութիւնը բերին խումբ մը երիտասարդներ, որոնք գործօն դերակատարութիւն ունին իրենց գաղութներու կեանքին մէջ:

Առաջին հերթին Մենք դրուատեցինք երիտասարդներուն դրական ներգրաւուածութիւնը իրենց գաղութներու կեանքին մէջ եւ նախանձախնդրութիւնը՝ գաղութներու վերանորոգման, ընդգծելով, որ ընկերութիւն մը չի կրնար յառաջդիմել առանց երիտասարդութեան, որովհետեւ երիտասարդութիւնը ընկերութեան աւելին է ու ներկան՝ ո՛չ միայն ապագան: Պարզեցինք Սփիւռքին դիմագրաւած մարտահրաւէրները եւ շեշտեցինք վերաբեռնումն ու վերակազմակերպման աշխատանքներուն հրամայականը՝ երիտասարդներուն գործօն մասնակցութեամբ: Նկատի ունենալով, որ Սփիւռքը թէ՛ հայոց ցեղասպանութեան հետեւանքով յառաջացած է եւ թէ՛ Հայաստանի տնտեսական տագնապէն մղուած արտագաղթած հայորդիներէ բաղկացած, յիշեցուցինք թէ՛ Սփիւռքը մնայուն շարժումի մէջ է: Հետեւաբար, ճիշդ չէ ընդհանրական մօտեցումներով քննել եւ արժեւորել Սփիւռքը, միաժամանակ շեշտելով թէ՛ գաղութներուն միջեւ հասարակաց գիծը Հայկական ինքնութիւնն ու պատկանելիութիւնն է: Քաջալերեցինք, որ երիտասարդութիւնը հետեւողի կրաւորական դերէն դուրս գայ, ու ինքզինք տեսնէ մասնակցող գործօն դերին մէջ: Վերջապէս, յիշեցուցինք, որ առցանց այս խորհրդակցութեան նպատակն է լսել երիտասարդները, իմանալ անոնց դժուարութիւնները, ակնկալութիւնները, եւ մանաւանդ անոնց տեսակէտները՝ համաշխարհայնացած աշխարհին ու անցանկապատ ընկերութեան մէջ մեր ինքնութիւնը առողջ պահելու միջոցներուն մասին:

Ապա, յաջորդաբար երիտասարդները անդրադարձան զիրենք յուզող հարցերուն: Անոնք դրին մայրենի լեզուին օգտագործման նուազումին եւ օտար լեզուամտածողութեան հարցը, ուղղագրութեան անբաւարար իմացութեան պատճառով առցանց հաղորդակցութեան մէջ լատինատառ գրելու հակումը, ընկերային ցանցերու վրայ Հայաստան-Սփիւռք յաճախ զիրար չհասկնալու պատճառով զիրար հակասելու երեւոյթը, օտար վարժարանի յաճախելու անպատեհութիւնները, արհեստագիտութեան անբաւարար օգտագործումը, երիտասարդութեան մօտ ինքնաճանաչման վերաշեշտումը, Արցախեան վերջին պատերազմի պատճառով երիտասարդութեան մօտ յուսալքման հոգեվիճակը, դեկավարութիւն-երիտասարդութիւն յարաբերութիւններու առնչուած խնդիրները եւ տնտեսական իրավիճակի հետեւանքով գաղութը լքելու հարցը: Յիշեալ նիւթերու քննարկումներուն լոյսին տակ երիտասարդները նաեւ պարզեցին իրենց առաջարկները՝ կրթական, կազմակերպչական, արհեստագիտական եւ եկեղեցական մարզերու կապուած: Լսելէ ետք մեր երիտասարդները, Մենք բարձր գնահատեցինք անոնց շինիչ ներդրումը եւ շեշտեցինք, որ այսօր չենք կրնար խուսափիլ համաշխարհայնացման մշակոյթէն. սակայն այս իրողութեան դիմաց հարկ է կառչիլ մեր ինքնութեան, որ հիմնուած պէտք է ըլլայ արժէքներու եւ խարսխուած՝ իտէալներու վրայ: Անհրաժեշտ է մտածել այնպիսի հաւաքական արժէքներու համակարգ մը յառաջացնելու մասին, որ ո՛չ հեռացնէ մեզ ներկայ ընկերութենէն եւ ոչ ալ կղզիացնէ, այլ զիրար հարստացնող ներքին յարակցութիւն մը ստեղծէ երկուքին միջեւ:

Դ) Չորրորդ հանդիպումը յատկացուած էր տեղեկատուական մարզին: Ընդհանուր գծերով պարզելէ ետք տեղեկատուական մարզի կարեւորութիւնը Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներուն մէջ, մասնակիցներէն իւրաքանչիւրը ներկայացուց մասնագիտական զեկոյց մը եւ ապա տեղի ունեցաւ լայն քննարկում: Լուսարձակի տակ առնուեցան մասնաւորաբար հետեւեալ կէտերը:

— Տուեալներու հաւաքագրումը խիստ կենսական է Սփիւռքի գոյքագրման եւ մասնագիտական մարդուփի ցուցակագրման աշխատանքին համար:

— «Զիփեր»-ու այսօրուան արտագրութեան ճար-

Սփիւռք... Ծար. էջ 4

Սփիւռք... Սկիզբը էջ 3

տարագիրտութիւնը հիմնուած է ծաւալի փոքրացման, բազմապատկուած տուեալներու ներառման եւ արագութեան բազմապատկութեան սկզբունքներուն վրայ: Հայկական տեղեկագիրտական գործօնը այս նոր ուղղութիւնը նկատի պէտք է ունենայ իր ցանցային աշխատանքները կազմակերպելու ընթացքին:

— Այսօրուան աշխարհակարգը կ'աշխատի ապակեգրոն, ապամեկուսացուող եւ անվերջ նորացուող դրութիւններով: Մեր աշխատանքներուն մէջ հարկ է այս աշխատակարգը ու գործելու՝ նկատի ունենալ՝ յատկապէս մեր դասական կառոյցներէն դուրս գտնուող զանգուածներուն հետ կապ հաստատելու համար:

Ե) Հինգերորդ հանդիպման նպատակն էր ամփոփել ցարդ կատարուած քննարկումներուն հիմնական մտքերը եւ գործնական մտեցումով ճշգրիլ առաջիկայ քայլերը: Մեր թելադրութեամբ նկատի առնուեցան առանցքային երեք ուղղութիւններ:— Բնութանաչում, հակազգեցութիւն ու գործընթաց: Ապա պարզեցինք այն յատկանշական երեւոյթները ու կատարուած առաջարկները՝ քաղուած թէ՛ առջանց հանդիպումներէն եւ թէ՛ ընդհանրապէս Սփիւռքի տարուան առիթով գրուած յօդուածներէն: Յիշեցուցինք, որ Սփիւռքը ներկայ գոյակիճակէն դուրս բերելու հրամայականը դարձած է հաւաքական մտահոգութիւն ու գոյութեան կանխարգիւծ: Յատկորէն նշմարելի է երիտասարդութեան մտեցումը, որ անյետաձգելի կը նկատէ Սփիւռքի վերակազմակերպումը, այլապէս, կրնայ աւելի խորանալ անջըրպետը երիտասարդութեան եւ սփիւռքահայ կեանքին միջեւ: Ընդգծեցինք նաեւ, որ Սփիւռքի Տարուան նպատակը ակադեմական ուսումնասիրութիւն մը պատրաստելը չէ, այլ՝ տարբեր մարզերու վերաբերուածի ու վերանորոգումի աշխատանքներուն համար շօշափելի տուեալներու վրայ հիմնուած ծրագիր մշակել ու գործընթաց ճշգրիլ է:

Ձ) Ազգ. Ընդհ. ժողովին ուղղած Մեր պատգամին, ինչպէս նաեւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովներու տեղեկագիրներուն մէջ լայն տեղ յատկացուած էր Սփիւռքի վերակազմակերպման: Ժողովը իր կարգին առանձին նիստով ու լայն քննարկումով շեշտեց Սփիւռքի վերակազմակերպման յոյժ կարեւորութիւնը եւ այդ գործընթացին սկիզբ տալու անհրաժեշտութիւնը՝ մասնաւորաբար թեմերուն կողմէ:

Արդարեւ, Սփիւռքի Տարուան առիթով տեղի ունեցած քննարկումները, զբաւոր թէ՛ առջանց, պարզեցին հասարակաց նոյն մտահոգութիւնները՝ թէ Սփիւռքը հայօրէն արագ մաշումի ընթացքի մէջ է, մեր կառոյցները սկսած են կորսնցնել իրենց այժմէականութիւնը, եւ հետեւաբար, անհրաժեշտ է Սփիւռքի վերակենսաւորումը մեր կեանքը շրջապատող ներկայ պայմաններուն ու իրականութիւններուն լոյսին տակ: Արդարեւ, յատկապէս անցնող տարուան ընթացքին այս բոլորին ականատես ու ականջալուր ըլլալէ ետք, եկանք այն համոզման, թէ Սփիւռքի գծով արտայայտուած հաւաքական մտահոգութիւնը այնքան խոր է, եւ կատարուելիք աշխատանքին ծաւալը այնքան մեծ ու անոր յատկացումը՝ այնքան էական, որ կարելի չէ այս բոլորը խտացնել մէկ տարուան ժամանակամիջոցին մէջ: Հետեւաբար, անհրաժեշտ է այս ուղղութեամբ կատարուող քննարկումները շարունակել, մասնակցութեամբ թեմական ու համայնքային ներկայացուցիչներու, մտաւորականներու, կառոյցներու պատասխանատուներու ու զանազան մարզերու մասնագէտներու՝ քննարկումներէ դէպի վերակազմակերպում ուղղուելու հեռանկարով:

ԻՆՉՊԷՍ ԿԱՐԵԼԻ Է ԻՆՔՆԱՔՆՆՈՒԹԵՆԷ ՈՒՂՂՈՒԻՆ ԴԵՊԻ ՎԵՐԱԿԱԶՋՄԱԿԵՐՊՈՒՄ

Սփիւռքի վերակազմակերպման պահանջը փաստօրէն դարձած է անյետաձգելի մտահոգութիւն: Սփիւռքի ներկայ վիճակին երկարաձգումը կը նշանակէ Սփիւռքի գունաթափումը, կազմալուծումը ու մաշումը: Անհրաժեշտ է հաւաքական ճիգով Սփիւռքին նոր կենսունակութիւն ներարկել՝ զայն դարձնելով համահունչ ներկայ աշխարհի իրականութիւններուն ու մարտահրաւէրներուն: Բնականաբար սա դիւրին ու հեզասահ աշխատանք մը չէ: Այսօր Սփիւռքը կը ներկայացնէ զանազանութիւններու, հակասութիւններու ու անորոշութիւններու խայտաբղէտ պատկեր մը: Հետեւաբար, Սփիւռքին նկատմամբ կարելի չէ միաձեւ ու միանուագ մտեցումներ որդեգրել: Գաղութները կ'ապրին տարբեր միջավայրերու մէջ՝ իրենց ներքին գրուածքները տարբեր են. կազմակերպչական տարբեր գրութիւններով կը ղեկավարուեն ու տարբեր ազդեցութիւններու ենթակայ են: Այլ խօսքով, մեր հաւաքական մտահոգութիւնը, նախանձախնդրութիւնը ու յանձնառութիւնը չեն ենթադրեր անպայման հաւաքական գործընթացքի եւ օրակարգի ճշգրտւած: Հարկ է նկատի ունենալ իւրաքանչիւր գաղութ կամ թեմ իր իւրապատկութիւններով, կա-

րիքներով ու առաջնահերթութիւններով, բնականաբար, մեկնելով հաւաքական սկզբունքներէ ու նպատակներէ: Մեր հայեցակէտով, յատկապէս հետեւեալ սկզբունքները ու նպատակները պէտք է դառնան առաջնորդող ուղեգիծը ու մղիչ ուժը Սփիւռքի վերակազմակերպման:—

— Վերարժեւորման ենթարկել Սփիւռքի մէջ ապրող հայու ինքնաճանաչումը՝ համաշխարհայնացած մշակոյթի լոյսին տակ:

— Հայ կեանքէն ներս առանցքային դերակատարութիւն ունեցող եկեղեցւոյ բարեկարգումը նկատել առաջնային՝ զայն պատշաճեցնելով ներկայ ժամանակներու ու որոշ չափով միջավայրի իւրայատկութիւններուն ու պայմաններուն:

— Մեր համայնքներէն ներս գործող կազմակերպութիւններու ինքնաքննութիւնը եւ գործունէութեան վերարժեւորումը կատարել նոր հրամայականներու լոյսին տակ:

— Մեր կառոյցներէն եւ ընդհանրապէս հայ կեանքէն հետզհետէ հեռացող երիտասարդութեան հայ կեանքէն ներս ներգրաւումը ապահովել երկխօսութեան ճամբով:

— Հայ կեանքի բոլոր բնագաւառներէն ներս ու բոլոր մակարդակներու վրայ կնոջ աւելի լայն ու գործօն դերակատարութիւնը երաշխաւորել:

— Համայնքի կեանքի զանազան մարզերէ ներս մասնագէտներուն ներդրումը դարձնել աւելի աշխոյժ ու հետեւողական:

ԹԵՄԵՐՈՒ ՎԵՐԱԿԱԶՋՄԱԿԵՐՊՈՒՄ

Սփիւռքի վերակազմակերպման մէջ կեդրոնական տեղ կը զբաւեն թեմերը: 2022 Սփիւռքի Տարուան Մեր Հռչակագրին մէջ անդրադառնալով թեմերու վերակազմակերպման, ըսինք՝ «Աւանդական Սփիւռքի կեանքը կազմակերպուած է եկեղեցւոյ շուրջ: Իւրաքանչիւր գաղութի եկեղեցին նկատուած է իր հաւաքական կեանքի կեդրոնը եւ անոր շուրջ հիմնած գաւազան մարգերու առնչուած իր հաստատութիւնները: Փաստօրէն եկեղեցին չէ կրցած քայլ պահել կեանքի յարափոփոխ պայմաններուն հետ: Եկեղեցւոյ բարեկարգումը հրամայական է: Եկեղեցի-ժողովուրդ յարաբերութիւնը նոր որակ ու ոճ պէտք է ստանայ ու եկեղեցին դառնայ ծառայական ցերեկայութիւն ժողովուրդի կեանքէն ներս: Ուստի, նկատի ունենալով եկեղեցւոյ առաջնային դերը գաղութի մը կեանքին մէջ, գաղութի վերակազմակերպումը հարկ է որ սկսի թեմական կեանքէն»:—

Այս համոզումէն մեկնած, կը թելադրենք որդեգրել հետեւեալ մտեցումը ու գործընթացը.—

1) **Նպատակ:** Կատարուելիք աշխատանքը հարկ է ըմբռնել վարչակազմակերպչական վերակազմակերպում մէջ անդին՝ որպէս վերանորոգում ու վերաշխուժացում եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան, ծառայութեան ու առաքելութեան նոր հրամայականներու լոյսին տակ:

2) **Մտեցում:** Անհրաժեշտ է մէկ կողմէն նկատի ունենալ մեր եկեղեցւոյ աւանդութիւններն ու ուսուցումները, եւ միւս կողմէ՝ տեղական իւրայատուկ պայմանները: Թեմական նեղ սահմաններուն մէջ պէտք չէ կատարուի յիշեալ աշխատանքը, այլ՝ համազարգացումի մաշտապով, նկատի ունենալով նաեւ քոյր կազմակերպութիւններուն տեսակէտը եւ սպասումը: Պատրաստուելիք ծրագիրը պէտք է ըլլայ իրապաշտ, հեռու՝ տեսական, պատահական ու ժամանակավրէպ մտեցումներէ:

3) **Մասնակիցներ:** Առաջնորդ Սրբազանին նախագահութեամբ սպասելի է, որ ներկայ աշխատանքին գործնապէս մասնակից դառնան Ազգ. Վարչութիւնը, յարակից մարմինները, հոգեւոր դասը, մասնագէտներ, երիտասարդներ, զանազան կառոյցներու պատասխանատուներ: Բնականաբար իւրաքանչիւր թեմ իր հայեցողութեամբ կը ճշդէ աշխատանքին ընթացքը ու մեթոդը:

4) **Գործադրութիւն:** Իւրաքանչիւր թեմի կողմէ պատրաստուելիք ծրագիրը հարկ է մշակել որպէս գործադրելի ուղեգիծ եւ ոչ թէ որպէս սոսկ ուսումնասիրութիւն: Ծրագրին գործադրութիւնը հարկ է որ կատարուի հանգրուանային ընթացքով:

5) **Վերակազմակերպման ենթակայ կառոյցներ ու միաւորներ. —**

ա.— Ծուխ: Ծուխը հիմք կը կազմէ եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան եւ այս պարագային՝ թեմին: Թեմը կազմակերպել կը նշանակէ նախ ծուխը կազմակերպել: Ծուխը պէտք է դառնայ աշխատանքներուն կիզակէտը: Այս նպատակը իրագործելու համար:—

Առաջին, յատուկ կարեւորութիւն պէտք է տրուի հոգեւոր հովիւին: Արդարեւ, հոգեմտաւոր զարգացում ու կոչումի գիտակցութիւն ունեցող եւ իր հօտին հետ մնալուն կապ պահող հոգեւոր հովիւր առանցքա-

յին դեր կրնայ ունենալ ծուխի վերակազմակերպման, ծաւալման ու աշխուժացման մէջ: Հոգեւոր հովիւին քարոզները պէտք է ըլլան ամփոփ ու այժմէական: Հոգեւոր հովիւը կոչուած է ճիշդ կերպով ու առաւելագոյն չափով օգտագործել ընկերային ցանցը, ժողովուրդին հետ կենդանի կապ պահելու համար: Այս ծիրէն ներս Սուրբ Գրային խորհրդածութիւնները, սուրբերու եւ սօներու մասին ամփոփ տեղեկութիւններու, ինչպէս նաեւ Ազգ. Առաջնորդարանին ու մեր Սուրբ Աթոռին առնչուած գլխաւոր լուրերու փոխանցումը ծուխի ժողովուրդին կը նկատենք անհրաժեշտ: Տնօրհնէքը, զանազան առիթներով ընտանիքներուն այցելութիւնը, եկեղեցւոյ սրահէն ներս կազմակերպուելիք հաւաքները եւս մեծապէս կը նպաստեն եկեղեցի-ժողովուրդ առաւել մերձեցման: Հոգեւոր հովիւր յատուկ ուշադրութիւն պէտք է դարձնէ դպրաց դասի կազմակերպման ու ընդհանրապէս ծրայակատարման: Անհրաժեշտ է որ Առաջնորդ Սրբազանը մօտէն հետամուտ ըլլայ հոգեւոր հովիւի գործունէութեան: Հոգեւոր դասի յատուկ հաւաքներու կազմակերպումը, հոգեւոր հովիւներու աշխատանքին յատուկ ուղեգիծի ճշգրտումը, պարբերաբար հովիւներու այլ ծուխեր տեղափոխութիւնը կրնան դրական դեր ունենալ ծուխերու եւ ընդհանրապէս թեմի կեանքին ու առաքելութեան աշխուժացման մէջ:

Երկրորդ, հոգեւոր հովիւին կողքին, հոգաբարձութիւնը եւս կարեւոր դեր ունի կատարելիք ծուխի հօրացման մէջ: Հետեւողական ճիգ պէտք է թափել երիտասարդացնելու հոգաբարձական կազմերը՝ նուիրեալ ու աշխատունակ անձեր պաշտօնի կոչելով: Հոգաբարձական կազմերէն ներս տիկիներու ներկայութիւնը կենսական է: Հոգաբարձութիւնը, Առաջնորդ Սրբազանին հետ խորհրդակցաբար, պէտք է մօտէն հետեւի հոգեւոր հովիւի աշխատանքներուն: Հոգեւոր հովիւը հարկ է որ նախագահէ հոգաբարձութեան ժողովներուն ու մասնակից դառնայ ճշգրտած ծրագիրներու իրագործման:

Երրորդ, ներդաշնակ ու սերտ գործակցութիւնը ծուխին եւ Ազգ. Առաջնորդարանին միջեւ հրամայական է: Թեմը ծուխերու ամբողջութիւնն է: Ծուխը համարատու է Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Վարչութեան: Այս շրջագծէն ներս, անհրաժեշտ է մէկ կողմէն՝ ամուր պահել համարատուութիւնը Ազգ. Առաջնորդարանին նկատմամբ, եւ միւս կողմէն՝ յարգել որոշ սահմաններէն ներս ծուխի ներքին ազատութիւնը, նկատի ունենալով երբեմն ծուխերուն ունեցած աշխարհագրական հեռաւորութիւնը եւ տարբեր պայմանները:

6) **Վերաշխուժացման կարօտ մարզեր. —**

ա.— Քրիստոնէական դաստիարակութիւն: Յատուկ կարեւորութիւն հարկ է որ տրուի քրիստոնէական դաստիարակութեան թէ՛ թեմական եւ թէ՛ ծխային մակարդակներու վրայ: Բնականաբար, ծրագրումի ու աշխատանքի կեդրոնը հարկ է ըլլայ Ազգ. Առաջնորդարանը: Սակայն ներդաշնակութիւն մը պէտք է ստեղծուի Ազգ. Առաջնորդարանին ու ծուխին միջեւ՝ բնականաբար միշտ նկատի ունենալով տեղական պայմանները: Ժողովուրդային հրատարակութիւնները (աղօթք, սուրբերու կեանք, աստուածաշնչական խորհրդածութիւն, եւլն.) կը նկատենք կարեւոր: Սուրբ Գրոց սերտողութիւնը անհրաժեշտ է նոր մեթոտներով կատարել, ինչպէս նաեւ յատուկ տեղ տալ մեր եկեղեցւոյ սուրբներուն, աւանդութիւններուն, դասնական ու բարոյական ուսուցումներուն եւ ներկայ ընկերութեան հետ աղերս ունեցող ընկերաբարոյական հարցերուն: Կիրականօրեայ վարժարաններու վերակազմակերպումը ու անոնց գործունէութեան ծաւալումը, մեր վարժարաններէն ներս կրօնագիրտական նիւթերու դասաւանդումը ու բարոյախօսական պահերու հաստատումը կը նկատենք խիստ հրամայական՝ մեր նոր սերունդներու քրիստոնէական ու հայեցի կազմաւորման իմաստով:

բ.— Ընկերային ծառայութիւն: Ընկերային ծառայութիւնը մեր եկեղեցւոյ առաքելութեան կարեւոր տարածքներէն մէկն է: Այս աշխատանքը առաւելաբար ուղղուած կրնայ ըլլալ մարդասիրական բնոյթ ունեցող պարագաներու, հիւանդներու, բանտարկեալներու եւ կամ նոր հաստատուած ընտանիքներու: Եկեղեցին պէտք է միշտ պատրաստ ըլլայ իր խնամքին յանձնուած հօտի ընկերային զանազան կարիքներու առաւելագոյն չափով օգտակար ըլլալով: Այս շրջագծէն ներս, հոգեւոր հայրերու կողմէ հիւանդանոցներու ու ծերանոցներու հետեւողական այցելութիւնը կենսական է:

գ.— Երիտասարդութիւն: Երիտասարդութիւնը մեր եկեղեցւոյ շուրջ համախմբելը առաջնահերթութիւնն է: Այս ուղղութեամբ յատուկ ծրագիրներ հարկ է որ պատրաստուին եւ Ազգ. Առաջնորդարանի եւ ծուխերուն կողմէ համադրուած կերպով իրականացուին՝ երիտասարդներուն մասնակցութեամբ: Երիտասարդ տարրեր հարկ է նշանակել թեմական բոլոր մարմիններէն

Standing Committee on Foreign Affairs of the Canadian parliament adopts motion for meetings on Artsakh Blockage

OTTAWA—In an unprecedented move, the The Standing Committee on Foreign Affairs of the Canadian parliament unanimously adopted a motion, calling for a maximum of three meetings on the blockage of the Lachin Corridor and to hear directly from Artsakh State representatives, The Armenian National Committee of Canada reports.

This is a historic move that will officially give an opportunity to representatives of the Republic of Artsakh to speak in front of the Canadian Parliament.

The motion reads as follows;

“That, pursuant to standing order 108(2) the Committee undertakes to hold a maximum of three meetings to study the present situation of the blockage of the Lachin Corridor, de

facto isolating the Nagorno-Karabagh region; that the Minister of Foreign Affairs of Canada, the Ambassador of Armenia, the chargé d'affaires a.i. of Azerbaijan, representatives of the two communities in Canada, the Permanent Representative of the Nagorno-Karabagh Republic to the United States and Canada and Gegham Stepanyan, the Nagorno-Karabagh Human Rights Defender be invited to testify by Friday, February 3, 2023; that the testimony and materials gathered by the community at these meetings be taken into consideration in the study of the security of the Azerbaijan Armenia borders and that deadline to submit additional witnesses to the clerk be at noon, on Friday, January 20.”

Key utilities in Artsakh disrupted amid ongoing blockade

STEPANAKERT—Gas supply to Artsakh has been cut off for the second time since the start of the blockade, amid disruptions to electricity and Internet connectivity.

ArtsakhGaz said that Azerbaijan disrupted the pipeline that carries natural gas to Artsakh on the afternoon of January 17. The gas supply operator said that the gas flow was restored six hours later, yet cut off again on the morning of January 18. Artsakh households have consequently been deprived of heating and hot water amid frigid temperatures.

“The ongoing blockade of Artsakh organized by the Azerbaijani authorities, creation of unbearable living conditions for the people and aggravation of the humanitarian crisis are aimed at one goal—to destroy the people of Artsakh as such by cleansing Artsakh of Armenians,” the Artsakh Foreign Ministry said in a statement about the gas supply disruption.

Artsakh has been under blockade by Azerbaijan since December 12. Government-sponsored Azerbaijani protesters posing as eco-activists have shut down the Lachin Corridor, the sole route connecting Artsakh with Armenia and the outside world, for nearly 40 days. Meanwhile Artsakh’s access to critical utilities has been periodically obstructed, leaving its 120,000 Armenian residents without gas, electricity or Internet.

Under the ceasefire agreement ending the 2020 Artsakh War, Azerbaijan must guarantee “traffic safety along the Lachin Corridor of citizens, vehicles and goods in both directions.” Russian peacekeepers were also de-

ployed to the Lachin Corridor to ensure its safety.

The gas supply to Artsakh was previously shut off on December 13, the day after the start of the blockade. It was restored three days later.

Artsakh receives its natural gas supply from Armenia through a single pipeline that runs parallel to the Lachin Corridor. Parts of the pipeline traverse territories controlled by Azerbaijan following the cession of land after the 2020 Artsakh War.

Artsakh’s electricity supply has also been disrupted. On January 17, Artsakh authorities increased the length of the rolling blackout from two to four hours in order to conserve the limited electricity reserve, leaving Artsakh households without electricity for a part of each day.

The high-voltage power line that provides Artsakh’s electricity supply from Armenia was damaged on January 9. The “accident,” as Artsakh authorities called it, took place near the town of Lachin, which is under Azerbaijani control.

Artsakh authorities say that Azerbaijan has prohibited repair crews from accessing the power line. The government has been drawing from Artsakh’s local generating stations for electricity.

Internet access was also blocked for over 24 hours starting on January 12. The cable that provides Artsakh with Internet connectivity was damaged along the Stepanakert-Goris highway, where the Azerbaijani protesters have been blocking the Lachin Corridor. Armenian technical specialists were allowed to repair the cable and restore service on the even-

Continued on page E2

The people of Artsakh are ready to stay and fight, Ruben Vardanyan says on BBC’s HARDtalk

STEPANAKERT—“It’s very important for the world to know what’s happening in a locked out territory, where 120 thousand people living in their own homeland for thousands of years and fighting for their independence during the last 35 years, have been blocked by Azerbaijani “eco-activists” since December 12. With support from the Azerbaijani state, they now control the road, and we don’t get anything except from the Red Cross and Russian peacekeepers. We have no gas, limited electricity; no food and medicine, no gasoline can enter our territory without the Red Cross and the Russian peacekeepers,” Vardanyan said in an interview with Hardtalk’s Stephen Sackur.

“From 1988 Armenians of Artsakh have been saying “we will not be part of Azerbaijan.” And they fight for their freedom. Today we are posing a very clear questions to the world, saying “do we have a right to self-determination, especially in a state that violated all the human rights for its own people?” he added.

Vardanyan stressed that one family has been controlling Azerbaijan for 44 years during the 104 years of existence of the country.

“There are no rights for the Azerbaijani people, not even talking about Armenians. How do you see the possibility for an ethnic minority to get any rights or any defence? We don’t see any chance,” the State Minister said.

He reminded that children returning to Artsakh six weeks after being stranded in

Armenia, were stopped, checked and psychologically attacked by Azerbaijanis.

Vardanyans said the Republic of Artsakh is ready for negotiations with an understanding from the Azerbaijani side that “this will be a negotiation between two sides.”

“We have been saying from very first day that we are living side-by-side, but we will be a separate territory, a separate state with separate rules of law, because we are a democratic country. We have had four presidents elected. We do not see ourselves as part of Azerbaijan, but we respect the fact that we live in the same region and we need to find a solution that will be acceptable for both sides,” he said.

“Despite all the speculation from Azerbaijan, the story is not over. We believe we have the right for our independence, the right to live in our homeland. People living in Artsakh understand the difficulties we are facing today, but are ready to stay and defend our own home. There is an understanding that we are small, but we are very big,” he added.

He dismissed the reports about any discrepancies between the Republic of Artsakh and Armenia. “The number one person in the republic — the President — always keeps in contact with the Prime Minister [Nikol Pashinyan]. That’s why I don’t know what you are talking about. This is a speculation I don’t think makes sense to reflect on during out conversation,” Vardanyan said.

(Armradio)

15 Armenian soldiers die in fire at military barracks

YEREVAN—Fifteen soldiers were killed and three others seriously injured in what authorities said was a major fire that broke out at a military barracks in Armenia on January 19.

According to the Armenian Defence Ministry, the fire erupted overnight at the barracks of an engineer-sapper company in a military unit in Azat, a village in eastern Gegharkunik province, some 110 kilometers east of Yerevan.

Citing the “preliminary” findings of military investigators, Prime Minister Nikol Pashinian and Defence Minister Suren Papikyan blamed it on a serious violation of fire-safety rules.

Pashinian said an officer of the unit used a large amount of gasoline to start a fire in a woodstove heating the barracks. He said the Armenian army’s General Staff strictly banned the use of gasoline and other highly inflammable liquids for such purposes in a written order issued as recently as on December 21.

“Primitive compliance with this order would have prevented the accident,” Pashinian added during a weekly session of his cabinet.

However, another junior military officer serving in Azat dismissed the official version of events, saying that no gasoline was kept inside the barracks.

“Even if it was, I wouldn’t allow that given the bad things

that could happen,” he told journalists. “The investigation must be conducted to the end and all the guilty must strictly punished.”

Papikyan announced during the cabinet meeting that about a dozen senior officers have already been sacked over what was one of the deadliest non-combat accidents ever registered in Armenia’s armed forces.

The sacked officers included Vahram Grigorian, the commander of the army’s Second Corps stationed in Gegharkunik. Grigorian’s three deputies and the chief of the Defence Ministry’s fire-safety service were also fired.

Law-enforcement authorities did report any arrests as of Thursday afternoon. According to them, all 15 victims of the fire were army conscripts.

The victims and seven other soldiers stayed in an abandoned village house turned into a barracks. Pashinian acknowledged that their living conditions were challenging.

“But that doesn’t matter,” he said. “Fire-safety regulations must be observed in any place of residence.”

The unusually deadly fire sparked uproar on social media. Well-known critics of Pashinian said it is the country’s political leaders — and Papikyan in particular — who are primarily responsible for the 15 deaths and must lose their jobs. Opposition leaders

also blamed the government.

“Their entire team should have resigned long ago,” said Seyran Ohanian, a former defence minister who now leads the parliamentary group of the main opposition Hayastan alliance.

“If I had been in this situation [as defence minister] I would have resigned right after the [2020 Armenian-Azerbaijani] war and I would have done the same today,” Ohanian told reporters.

Hayk Mamjianian, another opposition lawmaker representing the Pativ Unem bloc, said that the ruling political team will try to dodge responsibility for the soldiers’ deaths.

“Over the past year there have been some 15 cases where both Pashinian and his defence minister and entire gang of amateurs should have resigned,” he said. “Have they borne responsibility for anything until now?”

Artur Hovannisian, a senior lawmaker from Pashinian’s Civil Contract party, dismissed the resignation calls, saying that they will be “inappropriate” at least until the end of the criminal investigation into the accident.

“The political authority is responsible for every situation happening in the country,” he said. “But it doesn’t mean that we must try to immediately find scapegoats and blame everything on one person.”

(RFE/RL)

Karekin II holds memorial service for the 15 soldiers

ETCHMIADZIN — His Holiness Karekin II, Catholicos of All Armenians officiated over a memorial service on January 22 in the church of St. Gayane in memory of the 15 servicemen

who died during a fire in the engineer-sapper company of the military unit in Gegharkunik.

It was reported earlier that memorial services will be held in all churches of the Armenian

Apostolic Church.

As the press office of the Mother See of Holy Etchmiadzin notes, a prayer was offered for the souls of the dead.

(Communique)

A Mari Usque Ad Mare

HISTORIC NUMBER OF NEWCOMERS IN CANADA

The Canadian government has achieved a record-breaking number of newcomers welcomed in a year, surpassing the previous record from 2021. This is the largest number of people ever welcomed in a year, in Canadian history and the last time Canada welcomed such a large numbers of newcomers was in 1913. Immigration, Refugees and Citizenship Canada (IRCC) has played a critical role in achieving this target, by processing approximately 5.2 million applications for permanent residence, temporary residence and citizenship. This is double the number of applications processed in 2021.

The IRCC has also made important improvements to the immigration system by adding resources, embracing new technology, streamlining processing, and has brought more processes online. These changes will help push Canada in the right direction and position it well for the future. As the government focuses on addressing the labour market shortages and building a strong economy, immigration has been deemed a key part of the solution for these efforts.

The Minister of Immigration, Refugees and Citizenship Sean Fraser said: "Today marks an important milestone for Canada, setting a new record for newcomers welcomed in a single year. It is a testament to the strength and resilience of our country and its people. Newcomers play an essential role in filling labour shortages, bringing new perspectives and talents to our communities, and enriching our society as a whole. I am excited to see what the future holds and look forward to another historic year in 2023 as we continue to welcome newcomers."

CANADA INVESTS \$7.5 MILLION IN GOLDEN HORSESHOE

The Government of Canada announced an investment of nearly \$7.5-million for 31 projects in the Golden Horseshoe region including Hamilton, Halton, Haldimand-Norfolk, and Brant. The funding, through the Canada Community Revitalization Fund and the Tourism Relief Fund, will help to create community spaces and enhance tourism attractions, which will also lead to job creation and help the local economy. Dundas Valley School of Art and the Workers Arts and Heritage Centre will also be recipients of the investment. The former received funds to upgrade its outdoor space and the latter received funds to renovate a heritage-listed building to be more accessible and energy efficient.

"The investment announced today for the tourism sector and community infrastructure in the Golden Horseshoe will help to bring back visitors, modernize public spaces, and prepare for a strong future. With investments like the 31 community infrastructure and tourism projects announced today, our government is making smart investments that put people first and grow local economies that work for everyone," said the Minister responsible for the Federal Economic Development Agency for Southern Ontario Filomena Tassi.

"Across the Golden Horseshoe, we are fortunate to have vibrant and diverse community spaces and tourist attractions that are integral to the unique character of the region. These spaces are not only a source of pride for locals, but also an attraction for visitors who want to experience the culture and spirit of this region. This investment is helping to ensure these attractions and spaces remain and grow," said Lisa Hepfner, MP for Hamilton Mountain.

CANADA INVESTS \$2.7-MILLION FOR FOYER RICHELIEU WELAND COMMUNITY CENTRE

In a recent announcement made by the Minister of Official Languages and Minister responsible for the Atlantic Canada Opportunities Agency Ginette Petitpas Taylor, it was stated that the Canadian government is investing more than \$2.7-million to build a new community and cultural centre for Foyer Richelieu Welland.

The new investment will allow for the construction and development of a community and cultural centre that can accommodate at least 500 people each day. The centre will be designed to encourage gatherings and will improve services to Francophones by offering various training courses in French, support and respite services in French for caregivers, cultural programs including community shows and a social program including cooking classes and community barbecues. The project will see to the vitality of Welland's Francophone community and raise community awareness of the aging population and encourage intergenerational integration. The project began in October 2020 and the government has provided more than \$4.7-million to the project through the Community Spaces Fund.

"The Foyer Richelieu Welland is an anchor in the Francophone community. Today's investment will allow the centre to expand its services to Francophone seniors and their loved ones. These new services will help prevent isolation by giving them the opportunity to meet and interact in their own language while providing a healthy and pleasant living environment," said Minister Petitpas Taylor.

ISHKHAN GHAZARIAN

KEY UTILITIES...

continued from page E1

ing of January 13 following the mediation of the Russian peacekeeping force.

In addition to the interference with critical utilities, Artsakh is also facing severe shortages of food and medicine due to the blockade. Artsakh usually receives about 400 tons of essential goods, including food and medicine, from Armenia along the Lachin Corridor every day, according to Artsakh authorities.

The Artsakh government has implemented a coupon system to conserve the food supply and equitably distribute food to households. Each resident will receive nine coupons to purchase one kilogram of rice, pasta, buckwheat and sugar and one liter of oil per month. Coupons will be eligible for use starting on January 20.

Pharmacies are running low on critical medicine, including antibiotics, insulin syringes and fever-reducing medications. Essential goods for infants, including baby formula, baby food and diapers, are also limited in supply.

Many schools have temporarily closed due to the food shortage. Artsakh authorities say that 6,828 children cannot attend school, since 41 kindergartens, 56 preschools and 20 day schools are not operational.

At least 3,900 Artsakh residents are currently unemployed as a result of the blockade, since 726 businesses have been forced to close their doors.

The blockade has also restricted access to medical services. Since planned surgeries have

been temporarily suspended in Artsakh hospitals, 445 residents have been unable to receive necessary medical treatment. The International Committee of the Red Cross has facilitated the transfer of 28 patients from Artsakh to Armenia for treatment since the start of the blockade.

Russian authorities explicitly called for the reopening of the Lachin Corridor for the first time last week.

Russian Foreign Minister Sergey Lavrov called on the government of Azerbaijan to reopen the route during a phone call with his Azerbaijani counterpart Jeyhun Bayramov on January 17. Lavrov "stressed the need for the soonest complete unblocking of traffic along the Lachin Corridor," according to a readout of the call by the Russian Foreign Ministry.

The United States and France have previously condemned the closure of the Lachin Corridor, which they explicitly attributed to Azerbaijan. Meanwhile Armenian authorities have been critical of what they see as Russia's inaction in response to the blockade of Artsakh, including the failure of the Russian peacekeeping force to remove the Azerbaijani protesters from the corridor or reopen the route. Armenian Prime Minister Nikol Pashinyan called the Russian peacekeeping mission a "silent witness to the depopulation of the Nagorno-Karabagh region" on December 29.

Lavrov said that the Lachin Corridor will likely be reopened

soon, during a press conference on January 18. He said that representatives from Azerbaijan and Artsakh and the commander of the Russian peacekeeping mission in Artsakh met this week.

"I think the issue will be settled very soon," Lavrov said.

Artsakh President Arayik Harutyunyan confirmed that Russia had mediated a meeting with the Azerbaijani side on January 15. Yet Harutyunyan reported that "no progress was made" toward reopening the Lachin Corridor.

Meanwhile, the Azerbaijani protesters harassed a group of Armenian children returning home to Artsakh in a Russian vehicle on Tuesday night.

The 19 children were among the approximately thousand other Artsakh residents who have been stranded and unable to return home due to the closure of the Lachin Corridor. The Russian peacekeeping mission obtained the permission of the Azerbaijani side to escort the children from Armenia to Artsakh on January 17.

The Azerbaijani protesters shouted at the car and forced it to stop on the road. A group of masked protesters entered the car and filmed the children, who were visibly afraid. One of the children fainted from fear.

Azerbaijani media outlets have circulated the footage of the children as evidence that the Lachin Corridor is open for travel.

"The ethnic hatred of Azerbaijanis towards Armenians knows no boundaries, targeting even minor children," Artsakh Ombudsman Gegham Stepanyan said in a statement about the incident.

(The Armenian Weekly)


Ascenseur **Adams** Elevator
Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.**

Eddie, Pedro, Joyce Oughourlian



ADONIS



NOS MAGASINS

2001 Sauvé O,
Montréal, QC H4N 3L6
(514) 382-8606

4601 boul.Des Sources,
Montréal, QC H8Y 3C5
(514) 685-5050

8880 boul. Leduc,
Brossard, QC J4Y 0G4
(450) 656-9595

2425 boul.Curé Labelle,
Laval, QC H7V 1R3
(450) 978-2333

225 Rue Peel,
Montréal, QC H3C 2G6
(514) 905-6499

2173 St-Cathrine O,
Montréal, QC H3H 1M9
(514) 933-4747

3100 boul. Thimens,
Montréal, QC H4R 0C9
(450) 904-6789

2655 Ave. Des Aristocrates,
Laval, QC H7E 0H3
(450) 665-8801

7250 boul.Des Roseaies,
Anjou, QC H1M 2T5
(514) 493-6667

1240 Ave Eglinton O,
Mississauga, ON L5V 1N3
(905) 363-0707

1055 St-Laurent boul,
Ottawa, ON K1K 3B1
(613) 778-8883

920 boul.Maloney O,
Gatineau, QC J8T 3R6
(819) 317-1737

Suivez-nous !



www.groupeadonis.ca

20 Ashtonbee. Road,
Scarborough, ON M1L 4R5
(416) 642-1515

2561 Stanfield Rd,
Mississauga, ON L4Y 1R6
(365) 207-0200

1700 Rue Bouvier
Québec, QC G2K 1N8
(581) 890-9994

Gary(Կիրո)Chahinian

President, Broker of Record



THE DIAMOND REALTY

416-235-2500

With a history of over 30 years in Toronto's Central EgoBooker!



